Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3
Հեռ.՝ +374 93 515 600 **Էլ. հասցե՝** ldpf.foundation@gmail.com
Կայք՝ www.ldpf.am

Կարծիք

««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

31.10.2023 թ.-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ՀՀ Ներքին գործերի նախարարության կողմից քննարկման է ներկայացվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որը ներառում է նաև ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը[1] (այսուհետ՝ նաև Նախագիծ):

Սույնով ներկայացնում ենք մեր կարծիքը Նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ, որոնցով նախատեսվում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության և դրա մարմինների դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար սահմանել մյուս վարչական մարմինների վարչական ակտերի դեմ ներկայացվող հայցադիմումների համար գանձվող պետական տուրքի համեմատ էապես ավելի բարձր չափի պետական տուրքեր: Նախագծով առաջարկվող փոփոխություններն ըստ էության փաստարկվում են դատարանների անհարկի ծանրաբեռնվածությունը թոթափելու և պետության կողմից կատարվող դատական ծախսերի հատուցանելիության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ: Հարկ ենք համարում նշել, որ դատարան դիմելու համար պետական տուրքի սահմանումն առհասարակ իսկապես բխում է վերը մեջբերված նպատակից, և հենց այդ նպատակից ելնելով ՀՀ գործող օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են դատարան դիմելու իրավունքի չարաշահումը

[1] https://www.e-draft.am/projects/6406/about

կանխարգելող բավականին զսպող ազդեցություն ունեցող պետական տուրքեր, որոնց արդյունավետությունը այդ համատեքստում հիմնավորվում է հենց նախագծի հեղինակի կողմից ներկայացվող վիճակագրությամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-890 և ՍԴՈ-1655 որոշումների շրջանակներում, անդրադառնալով պետական տուրքեր վճարելու պարտականությանը, նշված սահմանադրական պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցությանը, պետական տուրքի բովանդակությանը, դերին ու նշանակությանը, գտել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը կարող է հետապնդել **բացառապես 2 նպատակ**, այն է՝ փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը և կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը՝ դատարանների անհարկի ծանրաբեռնվածությունից խուսափելու համար:

Նշված համատեքստում պետք է նկատել, որ առնվազն հեղինակը հիմնավոր փաստարկ չի ներկայացրել առ այն, որ հատկապես ՆԳՆ ոստիկանության դեմ է, որ ներկայացվում են առավել շատ անհիմն հայցադիմումներ, կամ որ այդ տեսակ գործերն ունեն մյուսների համեմատ առավել բարդ բնույթ, ինչը հանգեցնում է պետության համար դրանց քննության ավելի մեծ ծախսատարության և որպես հետևանք ծախսերի հատուցանելիության մակարդակը այլ գործերին հավասար պահելու նպատակով պետական տուրքերի ավելի բարձր դրույքաչափեր կիրառելու անհրաժեշտություն առաջացնում:

Ավելին, քննարկվող նախագծի հետ մեկտեղ քննարկման է ներկայացված նաև «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով, ի թիվս այլնի, նախատեսվում է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության և դրա մարմինների դեմ ներկայացվող հայցադիմումների քննությունը, անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով, ինչից բխում է, որ հեղինակն ինքն ունի այն համոզմունքը, որ նշված տեսակի գործերը ոչ միայն ավելի բարդ և պետության համար առավել ծախսատար չեն համեմատ մյուս վարչական ակտերի դեմ քննվողների, այլ ճիշտ հակառակը՝ մեծապես չեն հանդիսանում բարդ գործեր, ինչը թույլ է տալիս որպես կանոն դրանք քննել առավել պարզեցված՝ գրավոր կարգով:

Վերը նշվածը հիմք ընդունելով՝ ակնհայտ է, որ առկա չէ տարբերակված մոտեցում ցուցաբերելու իրավաչափ և օբյեկտիվ որևէ հիմք՝ հատուկ մոտեցում ցուցաբերելու համար հատկապես ՆԳՆ ոստիկանության և դրա մարմինների դեմ ներկայացվող հայցադիմումների մասով:

Գտնում ենք, որ նախագծի ընդունման արդյունքում կխախտվի դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված՝ խտրականության բոլոր ձևերից զերծ մնալու հիմնարար երաշխիքը և առաջարկում ենք հանրային քննարկման

ներկայացված փաթեթից հանել ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը։

Օրենսդրական նախագծերի շուրջ աշխատանքն ԻԶՊՀ-ն իրականացնում է Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) աջակցությամբ։